

époque»¹:

Իսկ ինչ որ ինծի ծանօթ է Մայրաքաղաքիս դիւանական վաւերագրերէն՝ յայտնի եւ բնական է որ վանականներու միջեւ եղած ժամանակակից թղթակցութիւնը հետաքրքրուած է օրական տեղեկութիւններով:

Հիւրմիւլդեան Աբրահամ նամակին համաձայն Բաղրատունի իր «Հայկ Դիւցազն»ը պատրաստած է Պոլիս եւ զայն հետը վանք բերելով առաջին անգամ յանձնել է կարգաւ Հ. Ալիշանի, որ արդէն կանխաւ նամակներով թախանձել է տեսնել այդ հրաշակերտը: Ահա թէ ո՛րքան հակառակը կը փաստէ այս կէտը՝ քան ինչ որ Օշական յատուկ մտայնութեամբ կը բացատրէ հետեւեալ յանդուպն դատաստաններով. «Օ երիցս երանեալ մանկամտութիւնը Հայոց մեծ դիւցազններդակին՝ որ իր քերթուածին սեւադրութիւններէն իսկ կը սարսափի ուրիշներու ձեռք անցնելու»: Բաղրատունի վանական իր խցիկին մէջն ալ միշտ վրադած է իր այդ գործին օրրատօրեայ կատարելագործութեամբը եւ ածապարանք չունի տպագրութեան տալու, թէպէտեւ վանական Հայերը կը թախանձեն որ մամուլին յանձնէ օր առաջ, մինչ նա դեռ բոլորովին չաւարտած եւ ժամանակի կարօտ կը համարի, այն ատիճանի որ Հիւրմ. Աբրահամ ինքնիրեն կը խորհրդածէ, որ եթէ «նմա թողուցու՞մ» խիթամ թէ երբեք չասիցէ զայն աւարտեալ»: Ան արդէն աւարտած էր ի Պոլիս 1852ին ու Պէշիկթաշեան ու Սր. Հէքիմեան հոն առաջին ընթերցողները եւ զմայլողները եղած էին: Այնու հանդերձ Աբրահամը կ'ըսէ ի գործ դնել այդ իր մտադրութիւնը քննիչներու եւս դնահատանքը լսելէ վերջ:

Դիւցազններդութիւնը «երկայնատող» ըլլալով կանխաւ կը մտածեն տպագրել «տառամանչինին նորաձոյլ տառիւք», ըստ արտայայտուած բացատրութեան: Մէկ մտահոգութիւն մը կայ սակայն. Հ. Արսէն նուիրելով իր «Հայկ Դիւցազն»ը յանուն ազգին եւ Հայաստանի, ինչպէս կ'ըսէ Հիւրմիւլդեան, «մեք մեզէն պարտիմք տը-

պագրել զայն», այսինքն նուիրած չըլլալով զայն որոշ մեկնասիր մը՝ զրոհն նըպաստի յոյս չկայ տպագրութեան ծախքերուն համար: Թէպէտեւ տպագրութեան ճակատը բաց ի «Առ Մայրն Հայոց» ընծայակնէն՝ կը տեսնենք անկէ առաջ նաեւ ոտանաւոր ընծայական մը «Առ ազատ սեպուհն Միհրան Տիւղ»: Միւս կողմէ ի պատրաստութիւն հրատարակութեան բերել կու տան «տպագիր քամբիոնս դարդուց», ինչպէս կը կարդանք առ Հ. Յովհաննէս Սորկուճեան Աբրահամը պրած նամակէն⁽²⁾, որպէսզի անոնցմէ կարենան առաջուց ընտրել կարեւոր եղածները: Հետաքրքրական է անշուշտ թէ ո՛րքան ծախք պահանջուած է «Հայկ Դիւցազն»ը ի լոյս ընծայելու համար: Պարզ 500 օրինակի համար 1500 Փրանք. իսկ եթէ պատկեր ալ դրուի՝ իւրաքանչիւրին համար 500 Փր. նշանակուած է: Դժուարութիւններու առջեւ ի սկզբան մտադիր եղած են դնել առջեւը, ինչպէս կը զրէ արբահայրը առ Հ. Բարսեղ⁽³⁾, «պատկեր մի ճակատովն հանդերձ եւ վիճեթային եւ միւս եւ ըզկենդանագիր քերթողին եթէ չընդգրկմանայցէ այն բացարձակապէս»:

Հուսկ կը յանձնուի մամուլին, եւ կ'արժանանայ ընդհանուրի դնահատանքին, եւ Աբրահամը դոհութեամբ կը փութայ հաղորդել նաեւ իր Գերայ. հարապատին, թէ բաղրատունեան այդ մեծ գործը աւարտած է (1858ին) հասարակաց ուրախութեան մէջ «յոյժ պատշաճապէս»⁽⁴⁾:

Թէ արդեօք «Հայկ Դիւցազն»ը ինչ տըպագրութիւն գործած է հետադայ մերձաւոր տարիներուն մէջ եւ ինչ դատաստան բրած են նաեւ օտարներ անոր մասին՝ կ'արժէ նախ յիշատակել Պէշիկթաշեանի կողմէ առ Բաղրատունի ուղղուած հետեւեալ խօսքերը. «Բա՛րէ, ահա դարձեալ Հայկ, անմեկնելին ի յուշոյ մերմէ. եւ մինչ գրեմ առ Ձեզ անդէն իսկ սիրտ իմ եւ գրիչ վազեն ի Հայկ. իղձ, տուփումն, տենչ եւ քաղց մեր վասն նորա անդթարար աղեկիղեն դմեզ: Երդմնեցուցանեմ զՁեզ յանուն ամենագողելի եւ յոյժ ար-

դարացի անհամբերութեան մերոյ, մի եւս դանդաղել՝ առաքել աստ զՀայկ լուսեղէն պոսկաւն, եւ կամ եկայք դուք ինքնին. չիք այսուհետեւ խտիր ընդ Ձեզ եւ ընդ Հայկ. երկրքեանքդ իսկ վիճակեցայք յանմահութիւն»⁽⁵⁾:

Թողունք Հ. Ալիշանի կողմէ առ Բաղրատունի տրուած «քերթողահայր» մակդիրը՝ Գերայ. Եղուարդ ալ կը հաղորդէ Հոյմաշէն 1863 թուականին, թէ Սոմաքի կրօնաւորներէն երեւելի քերթող մը կար-

դալով Բափիւղլեղի կողմէ եղած Հայկի դրուագի թարգմանութիւնը՝ այնքան ըսքանչացեր է «ընդ դիւտան եւ ընդ իմաստոս» որ անուաներ է զԲաղրատունին «Հոմերոս»: Սոյն քերթողը սակայն չէ ծածկած ըսելու որ անյաջող եղած է Բափիւղլեղի գործածած տաղաչափութիւնը, որուն համար նոյն նամակին մէջ կը խընդրէ Գերայ. Եղուարդէն որ ինչ ինչ մասեր Հայկէն բառացի թարգմանուած իրեն զրկուին, որպէսզի ինքը զանոնք կրկին ոտանաւորի վերածէ⁽⁶⁾:

Կատարուած է այդ փափաքը եւ իրագործուած է Սոմաքի կրօնաւորին մտադրութիւնը՝ չեմ հանդիպած տեղեկութեան մը:

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ

(5) Պոլիս, 13 Հոկտ. 1857. - տե՛ս Բզմ. 1936 Օղոտոս-Դեկտեմբեր (բացատրիկ թիւ), էջ 397:
(6) Գերայ. Եղ. Հիւրմ. առ Հիւրմ. Արս.:

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ԱՎԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ Յ. ՔԻՐՈՏԵԱՆԻՆ

«Բազմալեզու» թիւ 1-2-ում (1949 թ.) Պ. Յ. Քիրոտեանը «Ճշտումներ» ի կարգով մի գրութիւն է գեղեղել, ուր հանդիսի յարգելի խմբագրութիւնն ընդգծել է այսպիսի տողեր. «նկատելով, որ Պ. Յ. Քիրոտեանի և Պ. Հայկ Պէշպէրեանի միջեւ բացուած բանավեճը գիտական սահմանն կ'անցնի, հոս այլեւս վերջացած կը համարինք»:

Այս տողերն էլ նշում են, որ հայ բանասիրութեամբ զբաղուող Յ. Քիրոտեանի և Պէշպէրեանի ներկայիս պարտականութիւնն է պատշաճութեան սահմանից չչեղել և վերջ տալ ստեղծած հիւանդագին գրութեանը:

Ընդգծելով յարգելի խմբագրութեան ճիշտ մօտեցումը, այժմ երկու խօսք էլ ասեմք 1947 թ.ին «Անահիտ»ում մեր գրած «17-րդ դարի մի անյայտ ձեռագիր» խորագրով յօդածի վերաբերեալ «Բազմալեզու» թիւ 1-2-ում (1949 թ.) Յ. Քիրոտեանի հաղորդած սխալ տեղեկութիւններին մասին:

ա) Նշեմք նախ, որ 17-րդ դարի անյայտ ձեռագրի մասին Յ. Քիրոտեանը կարծիք է յայտնել զրջագիրը և մանրանկարներն առանց տես-

նելու, իսկ լուսնած մի ձեռագրի մասին արտայայտել, նշանակում է բանասիրական գրականութեան հանդէպ մեղանշել: Բայց դա առաջին երեւոյթը չէ, որ Պ. Քիրոտեանը հայ մամուլում ձեռագրի մասին անճիշտ տեղեկութիւններ է գրել և թիրիմացութիւնների պատճառ հանդիսացել: Դեռ 1946 թ.ին էր, որ «Էջմիածին» ամսագրի Ապրիլ-Մայիս համարում լոյս տեսաւ Յ. Քիրոտեանի հաղորդած տեղեկութիւնը, թէ Թարիկի «Ս. Աստուածածին» եկեղեցուն պատկանող ձեռագիրը «կը գողցի, կտոր կտոր կ'ըլլայ և էջ-էջ փարիզէն մինչեւ Ամերիկա կը ծախուի»:

Արդատականի վաստակաւոր Առաջնորդ՝ Ներսէս Արք. Մեղիք-Թանգեանը, Կարապետ առաք քահանայի միջոցով, թերթում հրապարակով հերքեց Յ. Քիրոտեանի անճիշտ տեղեկութիւնը, արձանագրելով, թէ Թարիկի եկեղեցուն պատկանող ձեռագիրը ոչ գողացուած է, ոչ էլ փարիզէն մինչեւ Ամերիկա ծախւած:

բ) Յ. Քիրոտեան իր «Ճշտումներ» գրութեան մէջ գրել է նաեւ այսպիսի տողեր. «Երեմեան չափազանց հարեւանցի կը ներկայացնէ ձեռագիրը իր վերոյիշեալ գրութեան մէջ»:

Դա պատահականութեան արդիւնք չէ, այլ կատարուած է գիտակցաբար: Ընդգծել ենք զլիաւորապէս զրջագրի հիմնական, էական մասերը: Յետոյ՝ նկատի առնելով, որ ձեռագիրը հայ մանրանկարչական արւեստի մի թանկագին

(1) G. Vapereau, Dict. univers. des contemp. Paris, 1858. p. 58.

(2) Հիւրմ. Արս. առ Հ. Յովհաննէս Սորկուճեան, 1856 Յունիս. 8:

(3) Նոյնը առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, 1857 Փետր. 12:

(4) Առ Գերայ. Եղ. Հիւրմ. Փետր. 21:

մնացորդ է, պատկերել ենք զրչագրի նկարչա-

կան գեղեցկութիւնները:

Վրիպակներն իսկական ձեռագրի հետ բա-
րեխղճութեամբ համեմատելուց յետոյ միայն
հնարաւոր է սխալների մասին կարծիք յայտնել,
թէ այդ վրիպակները գրաւարին, թէ յօդա-
ժագրին պիտի վերագրել: Դեռ 1939 թւին «Ա-
նահիտ»-ում Յ. Քիւրտեանի հրատարակած իգ-
նատիոս նկարչի յիշատակարաններում նկատե-
ցինք սխալաշատ տողեր և իր ժամանակին մա-
մուլում սրբագրեցինք, բայց ոչ թէ Քիւրտեանի
նման տպագրի վրայ հիմնելով, այլ իսկական
ձեռագրի հետ համեմատելով: Այդ է պահան-
ջում գիտական բանասիրութիւնը:

Յ. Քիւրտեանը իր «Ճշտումներ»-ում յայտ-
նել է նաեւ թէ ձեռագրի մանրանկարին է
Մկրտիչ զպիրը, ոչ թէ Աստուածատուրը: Իր
կարծիքը հաստատելու համար նա առաջ է բերել
հետեւեալ յիշատակարանը. «... ի ծագելէ աւե-
տարանիս... գտրուպ Մկրտիչ զպիրս...», առանց,
սակայն, նշելու, թէ այդ յիշատակարանը գրչա-
գրում գրւած է տարբեր և այն էլ ոչ գեղեցիկ
ձեռագրով: Այնուհետեւ Յ. Քիւրտեանն աւելի
խորացնելով իր կարծիքը, իրեն թոյլ է տւել
գրելու այսպիսի տողեր. «Երեմեանը նոյնիսկ
չի հասկցել յիշատակարանի իմաստը». Քիւր-
տեանի այդ մտեցումը պիտի վերագրել չարա-
խօսութեան: Այդ տողերի անճշտութիւնը հաս-
տատում են դեռ 1947 թւին «Անահիտ»-ում մեր
ստորագրած յօդւածի հետեւեալ ցայտուն տո-
ղերը. «Գրչագրում հանդէս են գալիս երկու
նկարիչներ, երկու տարբեր վրձիներ: Եթէ
գլխաւոր նկարիչը համարել ենք սարկաւազ Աս-
տուածատուրը, պարզ է, որ միւսն է Մկրտիչ
զպիրը:

Սակայն, ինչ է պատճառը, որ առանձնապէս
կանգ ենք առել սարկաւազ Աստուածատուրի վը-
րայ: Այդ հանգամանքը պարզում են ամենից
առաջ ձեռագրի 82-րդ էջի յիշատակարանի հե-
տեւեալ տողերը. «Զմեղազարդ գծող սարկա-
ւազ Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս»:

Քիւրտեանը լռութեամբ է անցել այս կո-
րեւոր յիշատակարանի վրայից, որը պարզ պատ-

կերում է այն նկարչի կերպարը, որն եղել է
իր ժամանակի նկարչական արեւոտի գլխաւոր
կենտրոններից մէկում Հալէպում, ուր խորացել
է զրչագրութեան ու նկարչական արուեստի մէջ
և գրել է ոչ միայն Աւետարանը, այլ և զծել է
(նկարել է) ձեռագրի գեղեցիկ նկարները: Ար-
դարեւ զրչագրի գրաֆիկ գեղանկարները և ոս-
կիզօծ նուրբ, քնքուշ ոճերով վրձինւած գար-
դանկարները, որոնք գրաւիչ են իրենց վառ,
կենդանի ու պայծառ գոյներով, հմուտ ու ձեւա-
կերպւած նկարչի ստեղծագործութիւններ են:

Կայ մի այլ կարեւոր հանգամանք: Զեռագրի
82-րդ էջի սարկաւազ Աստուածատուրին ներ-
ւած յիշատակարանը գրւած է այն գեղեցիկ
տառերով, որոնք իշխում են զրչագրի աւետա-
րանում: Անժխտելի է, որ վարպետ նկարիչը
միայն կարող է ունենալ գեղեցիկ ձեռագիր,
ինչպէս Աստուածատուր սարկաւազն է: Ընդհա-
կառակը, ձեռագրի 128-րդ էջի Մկրտիչ զպիրին
վերաբերող յիշատակարանը. «... ի ծագելէ
աւետարանիս գտրուպ Մկրտիչ զպիրս...»,
գրւած է տարբեր և անձաշակ ձեռագրով: Այդ
հանգամանքն էլ վկայում է, որ Մկրտիչ զպիրը՝
Աստուածատուր սարկաւազի նման ոչ գեղեցիկ
ձեռագիր է ունեցել և ոչ էլ նրա նկարչական
հմուտ վրձինը: Ահա թէ ինչո՞ւ ձեռագրում
Մկրտիչ զպիրի ծաղկած մանրանկարները թոյլ
ստեղծագործութիւններ են, գուրկ ուրոյն ար-
ժեքից:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թէհրան, 7 Ապրիլ 1949

Ա Մ Ա Շ Տ Ո Յ Ը

(ծ. թիւ՝ 457)

Պարզապէս ճշդելու համար հարկ կը տեսնեմ
յայտարարել, թէ՛ մեր Հ. Վահան վարդապետին
մեկնելուն, «Մէղք ըսի, չկրցար իմ բանախօ-
սութեանս մնալ. մեր Ա մաշտոցին վրայ գրած
եմ և կը ցուցնեմ թէ Էջմիածնի ձեռագիրնե-
րէն աւելի հին է, Մոսկովայի և Միլթէի՝ աւե-

(1) Հաւեգ. Ա.մ. 1943, էջ 23 եւն, կը ճգնի ցուցնել
թէ Միլթէի մեր ձ. աւետարանը 932ին պէտք է գրուած
ըլլայ և ոչ 902ին. որովհետեւ ՅԾԱ թուականը 82Ա
կարդալու է: Այդ բանը կ'ըսէ առանց ձեռագրերը տեսած
ըլլալու: Ուրախ ենք ըսելու որ այս գրերը մի միայն
ՅԾԱ կարելի է կարդալ, և ուրիշ ոչ մի բան: Բայց 902էն

տարանէն թէ ոչ հնագոյն՝ գէթ հաւասար է »:
Իմ այդ խօսքս քիչ մը տարբեր արձագանգ գտած
է ազգային մամուլի կողմանէ, (Մասիս՝ 15
Դեկտ. 1948, էջ 7, ս. 1: Յառաջ՝ 18 Յունուար
1949, էջ 3, ս. 1: Ապագայ՝ 29 Յունուար 1949,
էջ 3, ս. 3) եւն: - Եւ իրօք ես ցուցած եմ հոն
թէ խնդրական ձեռագիրը 885-886էն աւելի
ուշ չի կրնար ըլլալ: Զայդ կը ցուցնեմ նախ
1) Մասնագէտ բանասէրներու հեղինակութեամբ,
2) Ներքին և արտաքին քննութեամբ, 3) Ոսն-
լուայի համաոսոտ և շատ նախնական կանոնէն,
որուն վկայասիրի թարգմանած կամ յօրինածը
ծանօթ չէ: 4) Միւսոնօրհնէքի կանոնը՝ զոր զանց
կ'ընէ արտագրել, վեհագոյն հրամանաց անհնա-
զանդ չէրեւնալու համար. և հայրապետական
այդ արգելիչ տրամադրութիւնները՝ Օմեցիկն
(Է. դր.) վեր կային: - Կանխաւ ձեռագրովս զբա-
ղած են նախ Հ. Մատ. Եսայեան, ապա Հ. Բ.
Սարգիսեան (անտիպ). երկուքն ալ թ-ժ դա-
րուն կը համարին զայն: - Ասոնց հետեւելով,
աւելի ընդարձակօրէն ուսումնասիրեց զայն Կո-
նիէր իր Rituale Armenum-ով, ուր իր աշխա-
տութեան իբր առանցք դրած է ձեռագիրս, և
իր բոլոր ուշադրութիւնն՝ ասոր վրայ է կեդրո-
նացուցած: Ինքը որ Ե-Ը դարու 1000ի չափ
հին ձեռագիրներ քննած է ի Վաղարշապատ և
հին ձեռագիրներ քննած է ի Վաղարշապատ և
այլուր, սակայն անոնցմէ ոչ մէկը, կ'ընէ, հնու-
թեան այնքան տպաւորութիւն կը թողու՝ որքան
վիճեցիկ Ա մաշտոցը, իր ամէն տեսակէտով:
(իրաւամբ) կը պնդէ թէ ուղղակի Մաշտոց վար-
դապետի կենդանութեան և անոր ազդեցութեան
ներքեւ գրուած է: Իսկ էջ 507ին մէջ, զայն
ներքեւ գրուած է: Իսկ էջ 507ին մէջ, զայն
ներքեւ կը գնէ, որ ճիշտ չէ: - Անգղիացի
Ը դարուն կը գնէ, որ ճիշտ չէ: - Անգղիացի
բանասիրին հրատարակութեամբ, մատենան այ-
սօր թ դարուն ճանչցուած է: - Բայց ասոնցը՝
լոկ ենթադրութիւն է, արտաքին վկայութիւն
մը չունին: Աւելի մանրամասնութեան իջնելով
եւ զրական փաստով մը պիտի ջանամ ճշդել և
ստուգել մեր մաշտոցին թուականը: - Հիմակ
ձեռագիրը յիշատակարան չունի. բայց Ա միայն էջ
տարի առաջ անշուշտ այսպէս չէր: Միայն էջ
421ի մէջ, գրիչը դիպուածով մեզ կ'իմացնէ թէ
ինքը «Գորգ» երէց մ'է: Այս անունը մեզի բա-

բաւական առաջ է գիրքը. քանի որ այդ թուականը ա-
մենավերջին էջի մէջ է, անվարժ ձեռքի գործ է, և
արդիագոյն ձեւերով:

ւական լոյս պիտի տայ: - Մեր ԽԳ լիակատար
մաշտոցը, գրուած 1710ին, իր սեփական (էջ
777) յիշատակարանէն զատ, էջ 676՝ նախ ուրիշ
մը կը գնէ, զայն հանդիսաւոր կերպով «Յիշա-
տակարան Վէորգեայ» կոչելով, որ ամենեւին
կապ մը չունի ոչ իր գրչին (Խաչատուրին) և ոչ
իր դարուն հետ, այլ միջի անձինքն ու դէպքեր՝
ԽԳէն ինը դար առաջ են, (Սմբատ Բագրա-
տունի, Աշոտ եւն.): - Ստեփանոս Սեւանեցոյն
Մաշտոց վարդապետի կենսագրութիւն մ'է, զոր
ԽԳ չի վարանիր 2 անգամ «Յիշատակարան
Վէորգեայ» կոչել: Ինչո՞ւ Գէորգ, և ոչ Խաչա-
տուր կամ Ստեփանոս. ո՞վ է այդ Գէորգը: Ինքն
ալ Մաշտոցի ժամանակակից քահանայ մ'է որ
անոր աշակերտին, Ստեփանոսի, գրած կենսա-
գրութիւնն ուզած է օգտագործել՝ զայն իր ձե-
ռագրին մէջ մուծելով: Ապա թէ ոչ ինչո՞ւ
այդ յիշատակարանը Գէորգի անուամբ պիտի
գնէր: - Կը համարիմ որ ԽԳ ուղղակի կամ ա-
նուղղակի, մեր Ա մաշտոցէն օրինակուած է
(որուն յատուկ կանոններն ալ ունի), երբ դեռ
այն չէն էր, բնագրին յիշատակարանն ալ առած
է՝ համառօտելով զայն: Եւ որովհետեւ Ա մաշ-
տոցին գրիչը, տեսնաք, Գէորգ (= Գիորգ) էր,
որով զայն կոչեց «Յիշատակարան Վէորգեայ»:
Ուստի մեր Ա մաշտոցի յիշատակարանը՝ բազ-
դով անկորուստ պահուած է ԽԳին մէջ:

Յիշատակարանը Մաշտոցին ոչ կաթուղիկո-
սութիւնը ոչ ալ մահը (897) կ'ակնարկէ, այլ
միայն 893 տարին որուն մէջ հաւանաբար գրուած
է այն: Արդ, յիշատակարանն ընդհանրապէս ձե-
ռագրաց վերջին էջերուն մէջ կ'ըլլայ. ուստի այդ
ստուար հատորը պէտք է յիշատակարանէն 7-8
տարի մ'առաջ գրուած ըլլայ: Աս հաշուով Ա
մաշտոցի գրութեան տարին, ամենէն ուշ 885-
886ի կը հասնի. աս ոճով միայն կրնայ արդարա-
նալ Կոնիէրի խօսքը, թէ Մաշտոց վարդապե-
տին ներշնչման ներքեւ պէտք է գրուած ըլլայ:

Ենթադրութեան կը նպաստեն և լիապէս կը
հաստատեն զայն՝ թանկագին մատենանի հնու-
թեան ամբողջ պարզականը: Յիշատակարանի
այս անդրադարձութեան վրայ էր ահա, որ բա-
րեացակամ ընթերցողաց ուշադրութիւնն ուզած
էին հրաւիրել, և չկարենալով առ այժմ բանա-
խօսութիւնս ամբողջութեամբ հրատարակել, կը
բաւականանամ ներկայ տեղեկութեամբս, յու-
սալով յարմար առթին ի լոյս ընծայել բովան-
դակը:

Հ. Գ. Ս.

